ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵԴ - 4 - 2026
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» «03» 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Արթուր Նաջարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի մարտի 2-ի N 320-Ա/1 հրամանով հաստատված «Երիտասարդական կենտրոնների ստեղծում» միջոցառման (տող՝ «Երիտասարդական կենտրոնների ստեղծում») շրջանակներում դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 19-ի նիստի 03/26 և մարտի 5-ի 04/26 նիստի արձանագրությունները՝ «ՀՀ-ում գործող երիտասարդների տուն բաց երիտասարդական կենտրոնների վերազինում և վերագործարկում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն պայմանագրի Հավելված N 2-ում ներկայացված ֆինանսական նախահաշվի, պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 100080.7 հազար (մեկ հարյուր միլիոն ութսուն հազար յոթ հարյուր) դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ծրագրի նկարագիրը՝ Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3.-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Միջոցառմամբ և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրի աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1.-ին կետով սահմանված ժամկետներում պաշտոնական գրությամբ պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով՝ համաձայն հավելված N 5-ի: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե,

2.4.12. սույն պայմանագրի կնքումից հետո 3 ամսվա ընթացքում պետական մարմին ներկայացնել սույն պայմանագրի Հավելված N 2-ի 1-ին կետով սահմանված ծախսային ուղղությունը հիմնավորող՝ փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ, որի ընդհանուր արժեքը չի գերազանցի ֆինանսական նախահաշվում նշված հիմնանորոգման համար սահմանված գինը, իսկ 2-րդ կետով սահմանված ծախսային ուղղությունների համար ներկայացնել անվանացանկ՝ նախքան նշված ծախսային տողերով սահմանված ապրանքատեսակների ձեռքբերման գծով գնումների պլանի հրապարակումը:

2.4.13. պետական մարմին ներկայացնել միջանկյալ հաշվետվություններ՝ սույն պայմանագրի Հավելված N 1-ի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված միջոցառումների մասին՝ դրանց ավարտից հետո հնգօրյա ժամկետում,

2.4.14. 2028-2031 թվականների համար յուրաքանչյուր տարի՝ մինչև նախորդող տարվա նոյեմբերի 15-ը, պետական մարմին ներկայացնել հաջորդ տարվա գործողությունների ժամանակացույցը՝ պայմանագրին կից համաձայնագիր կնքելու համար

2.4.15. 2027-2031 թվականների համար յուրաքանչյուր տարի պետական մարմին ներկայացնել բովանդակային հաշվետվություններ՝ առաջին կիսամյակի համար մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 10-ը,

2.4.16. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (ֆինանսական, բովանդակային), իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

2.4.17. մինչև 2031 թվականը նախատեսված ծրագիրը 2027 թվականի ընթացքում դադարեցնելու դեպքում կազմակերպությունը պարտավոր է վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված միջոցներով ձեռքբերված ամբողջ գույքը և հիմնանորոգման ծախսերի (այսուհետ՝ ծախսեր) 50 %-ը, 2028 թվականին՝ ամբողջ գույքը և ծախսերի 40 %-ը, 2028 թվականին՝ ամբողջ գույքը և ծախսերի 30 %-ը, 2030 թվականին՝ ամբողջ գույքը և ծախսերի 20 %-ը, 2031 թվականին՝ ամբողջ գույքը և ծախսերի 10 %-ը,

2.4.18. ծրագրի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ուղղություններով ձեռքբերված հիմնական միջոցները պատշաճ ապրանքային տեսքով վերադարձնել պետական մարմնին, իսկ օգտագործման ընթացքում վնասելու, փչացնելու, կորցնելու դեպքում՝ փոխհատուցել վնասը,

2.4.19. ծրագրի ավարտից հետո, կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում, ծրագիրը շարունակելու դեպքում կքննարկվի գույքը կազմակերպությանը օգտագործման հանձնելու հարցը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի

միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 6) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված ծրագիրը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1.Սույն պայմանագրի 1.1.-ին կետում սահմանված գումարի 80%-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը՝ Հավելված N 1-ով նախատեսված միջոցառումների հաշվետվությունները ներկայացնելուց և պետական մարմնի համապատասխան ստորաբաժանումների դրական եզրակացությունները ստանալուց հետո ՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 20-ը՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 24-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2026 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրի միջոցառումների՝ Հավելված N 1-ի 1-ին կետի համար աշխատանքի ավարտ է սահմանվում 2026 թվականի հունիսի 20-ը, իսկ հաշվետվությունների ներկայացման համար՝ 2026 թվականի հունիսի 25-ը: Հավելված N 1-ի 2-րդ կետի համար աշխատանքի ավարտ է սահմանվում 2026 թվականի դեկտեմբերի 10-ը, հաշվետվությունների ներկայացման համար՝ 2026 թվականի դեկտեմբերի 15-ը: Հավելված N 1-ի 3-րդ կետի համար աշխատանքի ավարտ է սահմանվում 2026 թվականի դեկտեմբերի 10-ը, հաշվետվությունների ներկայացման համար՝ 2026 թվականի դեկտեմբերի 15-ը,

7.2. սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունավետության նկատառումներից ելնելով՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կարող են նախատեսվել աշխատանքների կատարման միջանկյալ հաշվետվություններ:

7.4.Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2.Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի

լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինն այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	ք. Գյումրի, Հովսեփյան 5/1,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011036648, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 2053122035601001, ՀՎՀՀ 05536501
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	yic@yic.am
Վ. Գասպարյան	Նախագահ՝
	Ա. Նաջարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 13 » « 03 » 2026 թ.
N ԵԴ- 4 -2026 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	Անվանումը	**Նկարագիրը**	**Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Միջոցառման իրականաց-ման վերջնաժամ-կետը**	**Հաշվետվութ-յան ներկայաց-ման կարգն ու ժամկետը**	**Պահան գումա (հազ դրա**
1.	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության հաստատում**	5 կենտրոններում նախատեսվող շինարարական աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում՝ համապատասխան նորմատիվատեխնիկական և օրենսդրական պահանջներին: Կազմված փաստաթղթերի փաթեթի ներկայացում լիազորված կազմակերպության փորձաքննության: Փորձաքննության դրական եզրակացության ստացումից հետո նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատում՝ հետագա շինարարական աշխատանքների կազմակերպման և	1.1) 5 կենտրոնի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար մրցույթի կազմակերպում: 1.2)Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատակարարի ընտրության կազմակերպում: 1.3) Ընտրված մատակարարի հետ պայմանագրի կնքում, անհրաժեշտ ծառայություններ ձեռքբերում: 1.4) Փորձաքննության մատակարարի հետ	Փորձաքննության դրական եզրակացություն 5 նախագծանախահաշվային հաստատված փաստաթղուղթ	Հունիսի 20, 2026 թ.	Հունիսի 25, 2026 թ.	392

		իրականացման համար:	պայմանագրի կնքում, անհրաժեշտ ծառայություններ ձեռքբերում:				
2.	**Հիմնանորոգման աշխատանքներ**	5 կենտրոնի հիմնանորոգման / վերանորոգման աշխատանքներ:	2.1 Շինարարական կազմակերպությունների ընտրության մրցույթի կազմակերպում: 2.2 Մրցույթի արդյունքերի ամփոփում, կազմակերպության ընտրություն: 2.3 Շինարարական կազմակերպության հետ պայմանագրի կնքում, անհրաժեշտ ծառայություններ ձեռքբերում:	5 վերանորոգված կենտրոն	Դեկտեմբերի 10, 2026 թ.	Դեկտեմբերի 15, 2026 թ.	442
3.	**Կահույք, սարքեր, սարքավորումներ (կահույք, Էլեկտրոնային տեխնիկա և խոհանոցային ու կենցաղային իրեր, սպասք)**	6 կենտրոնի կահույքի (ներկառուցվող և պատրաստի), տեխնիկայի, երաժշտական գործիքների ձեռքբերում, 5 կենտրոնի տեսահսկման համակարգի ապամոնտաժում, վերատեղադրում և անցկացում:	3.1 Կահույքի, տեխնիկայի, տեսահսկման համակարգերի ապամոնտաժման և անցկացման մրցույթի կազմակերպում: 3.2 Մրցույթի արդյունքերի ամփոփում, մատակարարների ընտրություն: 3.3 Մատակարարների հետ	Նյութատեխնիկական և գույքային հագեցվածությամբ 6 կենտրոն	Դեկտեմբերի 10, 2026 թ.	Դեկտեմբերի 15, 2026 թ.	3521

			պայմանագրի կնքում, անհրաժեշտ ապրանքների/ծառայությունների ձեռքբերում:			
	Ընդամենը՝					8340
	ԱԱՀ՝					1668
	Ընդամենը՝ ներառյալ ԱԱՀ-ն					1000

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036648, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝
Վ. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների
կենտրոն» ՀԿ
ք. Գյումրի, Հովսեփյան 5/1,
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2053122035601001, ՀՎՀՀ 05536501
yic@yic.am
Նախագահ՝
Ա. Նաջարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » « 03 » 2026 թ.
N ԵԴ- 4 - 2026 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀՀ-ում գործող երիտասարդների տուն բաց երիտասարդական կենտրոնների վերազինում և վերագործարկում» ծրագրի ծախսերի

	Ծախսատեսակի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազար	Գումարը (հազար դրամ)
1	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության հաստատում, այդ թվում՝**				**3,927.0**
1.1	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում (5 կենտրոնների համար՝ յուրաքանչյուրի համար 1 փաթեթ՝, ընդամենը՝ 5 փաթեթ)	փաթեթ	1	3,327.0	3,327.0
1.2	Փորձաքննության հաստատում (5 կենտրոնի նախագծանախա-հաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացություն)	հատ	1	600.0	600.0
2	**Հիմնանորոգման/վերանորոգման աշխատանքներ, այդ թվում՝**				**44260.0**
2.1	«Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հիմնանորոգման / վերանորոգման աշխատանքներ	հատ	1	11500.0	11500.0
2.2	«Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հիմնանորոգման / վերանորոգման աշխատանքներ	հատ	1	11760.0	11760.0
2.3	«Արմավիրի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հիմնանորոգման / վերանորոգման աշխատանքներ	հատ	1	7500.0	7500.0
2.4	«Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հիմնանորոգման / վերանորոգման աշխատանքներ	հատ	1	7000.0	7000.0
2.5	«Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հիմնանորոգման / վերանորոգման աշխատանքներ	հատ	1	6500.0	6500.0
3	**Կահույք, սարքեր, սարքավորումներ (կահույք, էլեկտրոնային տեխնիկա, խոհանոցային և կենցաղային իրեր), այդ թվում՝**				**32639.6**
3.1	Ներկառուցվող, պատրաստվող կահույք (Գյումրու, Արթիկի, Արմավիրի, Էջմիածնի, Աշտարակի և Գավառի կենտրոնների համար	լրակազմ	1	12563.0	12563.0
3.2	Պարկաթոռ	հատ	25	7.2	180.0
3.3	Աթոռ	հատ	80	31.212	2497.0
3.4	Աթոռ հոլովակավոր	հատ	16	42.12	673.9
3.5	Պատշգամբի համար նախատեսված կահույք	հավաքածու	1	344.5	344.5
3.6	Ծալվող աթոռ	հատ	20	8.1	162.0
3.7	Աթոռակ	հատ	16	5.52	88.3
3.8	Երաժշտական գործիք (կիթառ)	հատ	4	46.0	184.0

3.9	Սեղանի թենիս	հատ	3	140.0	420.0
3.10	Սեղանի հոկեյ	հատ	1	180.0	180.0
3.11	Սեղանի ֆուտբոլ	հատ	1	170.0	170.0
3.12	Շերտավարագույր	հատ	20	40.443	808.9
3.13	Ինտերակտիվ գրատախտակ՝ ներառյալ կանգնակ	հատ	5	1,080	5400.0
3.14	Միկրոֆոն՝ վոկալային	հատ	8	28.56	228.5
3.15	Վիրտուալ իրականության սարք (ներառյալ ակնոցներ, վահանակ և լիցքավորիչ)	հավաքածու	5	214.8	1074.0
3.16	USB միկրոֆոններ (փոդքաստերի ձայնագրման, հոլովակների համար)	հատ	3	17.88	53.6
3.17	Օղակաձև լամպ (Ֆոտո/ վիդեոնկարահանումների, փոդքաստերի համար)	հատ	3	16.9	50.7
3.18	Օդորակիչ	հատ	2	222.0	444.0
3.19	Միկրոալիքային վառարան	հատ	4	29.7	118.8
3.20	Փոշեկուլ	հատ	1	46.5	46.5
3.21	Բլենդեր	հատ	3	22.0	66.0
3.22	Դյուրակիր համակարգիչ	հատ	12	250.8	3009.6
3.23	Համակարգիչ մոնոբլոկ՝ ներառյալ մկնիկ և ստեղնաշար	լրակազմ	2	394.8	789.6
3.24	PS 5-ի վահանակ	հատ	6	29.0	174.0
3.25	Համակարգչի ձայնարկիչ	զույգ	4	5.5	22.0
3.26	Թվային ֆոտոխցիկ	հատ	4	282.0	1128.0
3.27	Բարձրախոս՝ աուդիո համակարգ	հատ	2	254.4	508.8
3.28	Փոդքաստի միկրոֆոն	հատ	4	18.0	72.0
3.29	Գազօջախ	հատ	2	132.0	264.0
3.30	Գրաֆիկական պլանշետ	հատ	4	44.99	180.0
3.31	Հարիչ	հատ	2	15.6	31.2
3.32	Bluetooth բարձրախոս (փոքր)	հատ	1	7.9	7.9
3.33	Դրոն՝ հեռակառավարման վահանակով	հատ	2	329.0	658.0
3.34	SMART հեռախոս	հատ	1	40.8	40.8
4	**Ծրագրային ծառայություններ, այդ թվում՝**				**2574.0**
	Գյումրու կենտրոնում - տեղադրված տեսահսկման համակարգի ապամոնտաժում և վերատեղադրում (ներառյալ՝ լարանցում)՝ 7 ներսի տեսախցիկ՝ կից սարքավորումներով (DVR, ինֆորմացիայի խտացուցիչ), - Անվտանգության հակահրդեհային վահանակի (1), ձայնային շչակի (1), հակահրդեհային ծխի տվիչի (6), շարժման տվիչի (2) ապամոնտաժում և վերատեղադրում (ներառյալ՝ լարանցում): **Արթիկի կենտրոնում** - Տեղադրված տեսահսկման համակարգի ապամոնտաժում և վերատեղադրում (ներառյալ՝ լարանցում)՝ 8 ներսի տեսախցիկ՝ կից սարքավորումներով (DVR, ինֆորմացիայի խտացուցիչ), 2 արտաքին հարավային տեսախցիկի տեղադրում				

	2 արտաքին հասկացող տեսախցիկի տեղադրում (ավելացում) - 2 նոր տեսախցիկի ձեռք բերում: **Էջմիածնի կենտրոնում** - Տեղադրված տեսահսկման համակարգի ապամոնտաժում և վերատեղադրում (ներառյալ՝ լարանցում)՝ 13 ներսի տեսախցիկ՝ կից սարքավորումներով (DVR, ինֆորմացիայի խտացուցիչ) **Արմավիրի կենտրոնում** - Տեղադրված տեսահսկման համակարգի ապամոնտաժում և վերատեղադրում (ներառյալ՝ լարանցում)՝ 11 ներսի տեսախցիկ՝ կից սարքավորումներով (DVR, ինֆորմացիայի խտացուցիչ) - 5 նոր տեսախցիկի ձեռք բերում: **Գավառի կենտրոնում** - Տեղադրված տեսահսկման համակարգի ապամոնտաժում և վերատեղադրում (ներառյալ՝ լարանցում)՝ 13 ներսի տեսախցիկ՝ կից սարքավորումներով (DVR, ինֆորմացիայի խտացուցիչ). - Անվտանգության հակահրդեհային վահանակի (1), ձայնային շչակի (1), հակահրդեհային ծխի տվիչի (8), շարժման տվիչի (4) ապամոնտաժում և վերատեղադրում (ներառյալ՝ լարանցում):				
4.1		ծառայություն	1	2,574	2574.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**83400.6**
	ԱԱՀ*				**16680.1**
	ԱՄԲՈՂՋԸ				**100080.7**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036648, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.
S.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Գյումրու «Երիտասարդական
նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
ք. Գյումրի, Հովսեփյան 5/1,
apy@apy.am
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2053122035601001, ՀՎՀՀ 05536501,
Էլ. փոստ՝ yic@yic.am
Նախագահ՝ Ա. Նաջարյան
(ստորագրություն)
Կ.

Հավելված N 3
« 13 » «03 » 2026 թ.
N ԵԴ- 4 2026 պայմանագրի

«ՀՀ-ում գործող երիտասարդների տուն բաց երիտասարդական կենտրոնների վերազինում և վերագործարկում»
դրամաշնորհային ծրագիր

Կազմակերպության անունը	Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն
Հապավումը (եթե առկա է)	ԵՆԿ ՀԿ
Ծրագրի անվանումը	«ՀՀ-ում գործող երիտասարդների տուն բաց երիտասարդական կենտրոնների վերազինում և վերագործարկում»
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)	2026. մարտի 15-ից 10.12. 2031 թ.
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք)	- Շիրակի մարզ, Գյումրի համայնք - Շիրակի մարզ, Արթիկ համայնք - Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք - Արմավիրի մարզ, Արմավիր համայնք - Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք - Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Արթուր Նաջարյան (+374) 55 85 83 07 artur.najaryan@yic.am
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Ջուլիետա Սարգսյան (+374) 93 30 15 86 julieta.sargsyan@yic.am
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ. փոստ)	Ալեք Մանուկյան 26, ք. Գյումրի, 3108 +374 95 919197, yic@yic.am
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)	100080.7 հազար դրամ

Ծրագրի նկարագրություն

Ներկայացրեք ընտրված համայնքի բնակչության, համայնքում ապրող երիտասարդների թվի նրանց կարիքի և ընտրված համայնքում երիտասարդական կենտրոն ստեղծելու, կամ արդեն իսկ գործող կենտրոնը վերագործարկելու անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվությունը:

«ՀՀ-ում գործող երիտասարդների տուն բաց երիտասարդական կենտրոնների վերազինում և վերագործարկում» ծրագիրը միտված է ՀՀ Շիրակի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի հինգ համայնքներում՝ Գյումրի, Արթիկ, Վաղարշապատ, Արմավիր և Գավառ, գործող «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների արդիականացմանը և վերագործարկմանը, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի հիմնադրմանն և գործարկմանը՝ համապատասխան ՀՀ «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքով սահմանված մոտեցումներին, երիտասարդի տարիքային նոր սահմանաչափին՝ 13-35 տարեկան, ինչպես նաև ԿԳՄՄՆ նախարարի կողմից հաստատված «Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցի» պահանջներին:

Նշված համայնքներից Գյումրին և Աշտարակը քաղաքային համայնքներ են, իսկ Վաղարշապատը, Աշտարակը, Արմավիրը, Արթիկը և Գավառը՝ վարչատարածքային բարեփոխումների արդյունքում ձևավորված խոշորացված համայնքներ են, որոնք ընդգրկում են մի քանի քաղաքային և գյուղական բնակավայրեր և ունեն տարածքային մեծ ընդգրկում ու բազմազան սոցիալ-ժողովրդագրական կառուցվածք: Խոշորացված համայնքների պայմաններում երիտասարդների զգալի մասը բնակվում է ոչ միայն համայնքային կենտրոնում, այլև հեռավոր և սահմանափակ հնարավորություններ ունեցող բնակավայրերում, որտեղ բացակայում են որակյալ ոչ ֆորմալ կրթության, մասնակցության և զարգացման հարթակները: Այս հանգամանքը երիտասարդական միջավայրերի ձևավորման խնդիրը դարձնում է ոչ միայն համայնքային կենտրոնների, այլև համայնքների կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերի համար հրատապ:

Միաժամանակ, նշված համայնքներում ապրում են նաև Լեռնային Ղարաբաղից տեղահանված երիտասարդներ, որոնք հայտնվել են նոր սոցիալական միջավայրում և կանգնած են ինտեգրման, կրթական և մասնագիտական շարունակականության, ինչպես նաև համայնքային կյանքում ներգրավվելու լրացուցիչ մարտահրավերների առջև: Այս երիտասարդները հանդիսանում են ծրագրի առաջնահերթ թիրախ խմբերից մեկը՝ պահանջելով հատուկ ուշադրություն, աջակցող միջավայր և զարգացման հնարավորություններ:

Ծրագրի շահառուները լինելու են ինչպես տվյալ քաղաքների, այնպես էլ խոշորացված համայնքների կազմում ընդգրկված այլ բնակավայրերից եկող երիտասարդները՝ ապահովելով միջհամայնքային և միջբնակավայրային ընդգրկում և հասանելիություն:

Ընտրված համայնքներում բնակչության և երիտասարդների թվաքանակը հետևյալն է.

- **Գյումրի** - 114,667 բնակիչ, որոնցից մոտ 33,000-ը 13-35 տարեկան պատանիներ և երիտասարդներ են,

- **Աշտարակ** - 78,208 բնակիչ, որոնցից մոտ 16,819-ը 13-35 տարեկան պատանիներ և երիտասարդներ են,

- **Արթիկ** - 52,984 բնակիչ, որոնցից 16,330-ը 13-35 տարեկան պատանիներ և երիտասարդներ են,

- **Վաղարշապատ** - 100,114 բնակիչ, որոնցից 28,569-ը 13-35 տարեկան պատանիներ և երիտասարդներ են,

- **Արմավիր** - 56,103 բնակիչ, որոնցից 17,450-ը 13-35 տարեկան պատանիներ և երիտասարդներ են,

- **Գավառ** - 62,835 բնակիչ, որոնցից 18,298-ը 13-35 տարեկան պատանիներ և երիտասարդներ են:

Վերընշված տվյալները ցույց են տալիս համայնքային մակարդակում ժամանակակից և որակյալ երիտասարդական միջավայրերի ձևավորման անհրաժեշտությունը՝ ուղղված երիտասարդների բազմազան կարիքներին:

Վերջին տարիներին Հայաստանում երիտասարդության ոլորտում իրականացվում են բովանդակային և կառուցվածքային բարեփոխումներ, որոնց առանցքում են երիտասարդի համակողմանի զարգացումը, մասնակցության ընդլայնումը, զբաղվածության խթանումը և ներառական երիտասարդական միջավայրերի ձևավորումը: «Երիտասարդական քաղաքականության մասին ՀՀ օրենքով» երիտասարդի տարիքային սահմանաչափը սահմանվել է 13-35 տարեկանը, ինչը էապես փոխում է երիտասարդական աշխատանքի հասցեատերերի շրջանակը և պայմանավորում է գործող երիտասարդական ենթակառուցվածքների բովանդակային վերանայման անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ, մարզային համայնքներում երիտասարդների առջև ծառացած մարտահրավերները շարունակում են մնալ համակարգային բնույթի: Հանրային և միջազգային հետազոտությունները վկայում են, որ երիտասարդների զգալի հատվածը դուրս է մնում կրթության, զբաղվածության և հանրային կյանքի ակտիվ գործընթացներից, իսկ մարզերում այդ միտումներն առավել արտահայտված են: ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալները՝ ըստ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների շրջանակում կիրառվող SDG 8.6.1 ինդիքատորի, ցույց են տալիս, որ 2024 թվականին Հայաստանում մոտ 23.3% երիտասարդներ (15-24 տարեկան) չեն ընդգրկվում կրթության, զբաղվածության կամ վերապատրաստման գործընթացներում՝ դասվելով այսպես կոչված NEET (կրթություն կամ ուսուցում չստացող, զբաղվածություն չունեցող երիտասարդներ) խմբում: Նմանապես, ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուսումնասիրությունները փաստում են, որ շուրջ 24% երիտասարդներ ամբողջ երկրում դուրս են մնում ֆորմալ կրթությունից և աշխատանքից՝ զրկված լինելով ուսումնառության, մասնագիտական զարգացման և սոցիալական առաջընթացի հնարավորություններից:

Այս տվյալները վկայում են երիտասարդների զգալի հատվածի սոցիալական և կրթական մեկուսացման, ինչպես նաև հանրային կյանքից դուրս մնալու

համակարգային խնդրի մասին, որը հատկապես սուր է դրսևորվում մարզային համայնքներում:

Համայնքային մակարդակում երիտասարդների առջև առավել ակնառու են դառնում հետևյալ հիմնական կարիքներն ու մարտահրավերները՝

- ոչ ֆորմալ կրթության և կարողությունների զարգացման որակյալ ու շարունակական հնարավորությունների սահմանափակ հասանելիությունը,
- ազատ ժամանակի արդյունավետ և բովանդակային կազմակերպման հարթակների պակասը,
- համայնքային կյանքում և որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության ցածր մակարդակը,
- անվտանգ, ներառական և աջակցող երիտասարդական միջավայրերի բացակայությունը,
- տեղեկատվության, ծրագրերի և զարգացման հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը,
- մասնագիտական կողմնորոշմանը և կարիերայի պլանավորմանը աջակցող հարթակների և մեխանիզմների սահմանափակ լինելը:

Նշված խնդիրների պայմաններում երիտասարդական կենտրոնները հանդիսանում են այն հիմնական համայնքային միջավայրերը, որոնք կարող են նպաստել կանխելու երիտասարդների դուրս մնալը կրթությունից, զբաղվածությունից և հանրային կյանքից՝ ապահովելով ոչ ֆորմալ կրթության, կարողությունների զարգացման, կողմնորոշման, մասնակցության և ինքնաիրացման հասանելի ու անվտանգ հարթակներ: Դրանք հնարավորություն են տալիս հատկապես մարզային և խոշորացված համայնքների երիտասարդներին ներգրավվել ուսումնառության, փորձի ձեռքբերման, նախաձեռնությունների իրականացման և համայնքային կյանքին մասնակցության գործընթացներում՝ նվազեցնելով մեկուսացման և մարգինալացման ռիսկերը:

Այս համատեքստում երիտասարդական կենտրոնները պետք է վերափոխվեն բազմաֆունկցիոնալ երիտասարդական միջավայրերի, որոնք կծառայեն որպես երիտասարդների զարգացման, հզորացման և մասնակցության իրական հարթակներ՝ ապահովելով հասանելի, որակյալ և ժամանակակից ծառայություններ 13-35 տարեկան բոլոր երիտասարդների համար:

Նշված կարիքների ֆոնին երիտասարդական կենտրոնները հանդիսանում են երիտասարդների կարողությունների զարգացման և ներուժի բացահայտման կարևորագույն միջավայրեր, որտեղ իրականացվում է համակարգված և պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանք, ինչպես նաև մատուցվում են կարիքահեն երիտասարդական ծառայություններ, մասնավորապես՝

- կրթական ակումբներ, աշխատարաններ և դասընթացներ,
- տեղեկատվություն և խորհրդատվություն,
- ուսումնաճանաչողական այցեր,
- էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ,
- ժամանցային և հանրային միջոցառումներ,
- թեմատիկ միջոցառումներ,
- անհատական երիտասարդական աշխատանք,
- շարժական երիտասարդական աշխատանք,
- ուսումնական և աշխատանքային պրակտիկա,
- միջազգային և տեղական ծրագրերի մասնակցություն,
- հատուկ հյուրերի հետ հանդիպում-քննարկումներ,
- ֆիլմի դիտում-քննարկումներ,
- երիտասարդական նախաձեռնությունների խթանում և իրականացման աջակցություն:

Ծրագրի հիմքում ընկած է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության բազմամյա փորձը: Կազմակերպությունը 2018 թվականի ապրիլից՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ և Գյումրի համայնքապետարանի աջակցությամբ, Հայաստանում գործարկել է առաջին բաց երիտասարդական կենտրոնը՝ «Երիտասարդների տուն»-ը Գյումրիում: Հետագա տարիներին նույն մոդելով կենտրոններ են ստեղծվել Սպիտակ (2020 թ.), Արմավիր (2022 թ.), Վաղարշապատ (2022 թ.), Գավառ (2022 թ.) և Արթիկ (2024 թ.) համայնքներում՝ համագործակցելով ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի և համապատասխան համայնքապետարանների հետ:

2026 թ. հիմնվելու և գործարկվելու է նաև «Աշտարակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը՝ Աշտարակի համայնքապետարանի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Կարևոր է ընդգծել, որ «Երիտասարդների տուն» մոդելի հիմքում ընկած է Հայաստանում առաջին անգամ մշակված և ներդրված երիտասարդական աշխատանքի համապարփակ մեթոդաբանությունը, որը ստեղծվել է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական

կազմակերպության կողմից՝ եվրոպական առաջատար փորձի և տեղական համատեքստի համադրությամբ: Այս մեթոդաբանությունը Հայաստանում առաջին անգամ փորձարկվել է որպես պիլոտային մոտեցում Գյումրիում ստեղծված «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում և արձանագրել է բարձր արդյունավետություն՝ երիտասարդների ներգրավվածության, կարողությունների զարգացման և համայնքային մասնակցության խթանման առումով: Հաջող պիլոտային փորձի հիման վրա մոդելը աստիճանաբար տարածվել է այլ համայնքներում՝ դառնալով կրկնօրինակելի և կայուն լուծում մարզային երիտասարդական միջավայրերի զարգացման համար:

Մեթոդաբանությունը ներառում է երիտասարդական աշխատանքի սկզբունքներ, գործիքակազմ, ծառայությունների փաթեթ, մասնագետների դերերի հստակ սահմանում և որակի ապահովման մեխանիզմներ՝ ձևավորելով միասնական, համակարգված և պետական քաղաքականության հետ համահունչ մոդել երիտասարդական միջավայրերի համար:

«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների գործունեության հիմնական ուղղություններն են՝

- քաղաքացիական կրթություն,
- կյանքի հիմնարար հմտությունների զարգացում,
- մասնագիտական կողմնորոշում,
- առողջ ապրելակերպի խթանում,
- առաջնորդություն և նախաձեռնողականություն,
- բովանդակալից ժամանցի կազմակերպում:

2025 թվականի տվյալներով՝ տարեկան կտրվածքով «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների 13-18 տարեկան եզակի շահառուների (unique beneficiary) թվաքանակը կազմում է՝

- Գյումրի - 700 երիտասարդ, որից 450-ը՝ կենտրոնահեն, 250-ը՝ շարժական աշխատանքով,
- Արթիկ - 600 երիտասարդ, որից 400-ը՝ կենտրոնահեն, 200-ը՝ շարժական,
- Վաղարշապատ - 600 երիտասարդ, որից 400-ը՝ կենտրոնահեն, 200-ը՝ շարժական,
- Արմավիր - 600 երիտասարդ, որից 400-ը՝ կենտրոնահեն, 200-ը՝ շարժական,
- Գավառ - 600 երիտասարդ, որից 400-ը՝ կենտրոնահեն, 200-ը՝ շարժական:

Այս կենտրոնները տարեկան ընդգրկում են 3000 և ավելի երիտասարդի՝ առաջարկելով կյանքի հմտությունների զարգացում, ոչ ֆորմալ կրթություն, խորհրդատվություն և մասնակցության հնարավորություններ: Ներկայիս ծրագրի շրջանակում նպատակ է դրվում այդ փորձը նոր որակով զարգացնել՝ ձևավորելով

մարզային համայնքներում ժամանակակից, հասանելի և որակյալ երիտասարդական միջավայրեր, որոնք կծառայեն որպես երիտասարդների զարգացման, հզորացման և համայնքային ներգրավվածության հիմնական հարթակներ՝ լիովին համահունչ ՀՀ երիտասարդական քաղաքականության նպատակներին և պետության կողմից սահմանված նոր պահանջներին:

Երիտասարդների կարիքների դինամիկ փոփոխությունը, սոցիալ-տնտեսական միջավայրի զարգացումները և տեխնոլոգիական առաջընթացը պահանջում են գործող կենտրոնների շարունակական արդիականացում՝ բարձրացնելով դրանց գրավչությունը, ֆունկցիոնալ հնարավորությունները և մատուցվող ծառայությունների որակը: Սա հնարավորություն կտա կենտրոններին առավել արդյունավետ արձագանքել երիտասարդների բազմազան կարիքներին, ընդլայնել նրանց ներգրավվածությունը և ապահովել որակյալ, հասանելի և ժամանակակից երիտասարդական ծառայություններ համայնքային մակարդակում:

Առաջարկվող կենտրոնի տարածքի վերաբերյալ տեղեկատվություն

Ներկայացնել առաջարկվող երիտասարդական կենտրոնի տարածքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշելով տեղակայման վայրը (հասցեն), կենտրոնի չափը, սենյակների քանակը և դասավորվածությունը և այլ մանրամասներ:

Ներկայումս «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը ՀՀ տարբեր համայնքներում ձևավորել է «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների կայուն և զարգացող ցանց, որը ներառում է հետևյալ կենտրոնները՝

- **Շիրակի մարզ, Գյումրի համայնք** - «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, հասցե՝ Վազգեն Սարգսյան 20 (ընդհանուր մակերես՝ 99.57 քմ, հիմնադրվել է 2018թ.),

- **Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք** - «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, հասցե՝ Լեոնիդ Ազգալդյան 7 (ընդհանուր մակերես՝ 164.6 քմ, հիմնադրվել է 2022թ.),

- **Արմավիրի մարզ, Արմավիր համայնք** - «Արմավիրի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, հասցե՝ Ջիվանու 40 (ընդհանուր մակերես՝ 110 քմ, հիմնադրվել է 2022թ.),

- **Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք** - «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, հասցե՝ Սայադյան 3 (ընդհանուր մակերես՝ 175 քմ, հիմնադրվել է 2022թ.),

- **Շիրակի մարզ, Արթիկ համայնք** - «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, հասցե՝ Բաղրամյան փողոց 10/6 (ընդհանուր մակերես՝ 154.5 քմ, հիմնադրվել է 2024թ.):

- **Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք** - «Աշտարակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, հասցե՝ Ն.Աշտարակեցու 80 (ընդհանուր մակերես՝ 228,7 քմ, հիմնադրվելու է 2026թ.):

Կենտրոնները հիմնադրվել են միջազգային գործընկերների և տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ և ներկայումս գործում են համայնքապետարանների հետ համագործակցության շրջանակում՝ ապահովելով համայնքներում երիտասարդական քաղաքականության գործնական իրականացում:

Կենտրոնների բոլոր տարածքները տրամադրված են համայնքապետարանների կողմից և տեղակայված են համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում: Դրանք ունեն առանձնացված և ինքնուրույն մուտքեր, գտնվում են համայնքների հասանելի հատվածներում և ապահովում են ազատ, անվտանգ ու հարմարավետ մուտք երիտասարդների համար: Տարածքները հարմարեցված են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին՝ ապահովելով ֆիզիկական մատչելիություն և ներառական միջավայր բոլոր շահառուների համար:

Յուրաքանչյուր երիտասարդական կենտրոն ունի բազմաֆունկցիոնալ կառուցվածք և միջինում ներառում է 5-6 ֆունկցիոնալ սենյակ, որոնք նախատեսված են տարբեր ձևաչափի գործունեությունների իրականացման համար, մասնավորապես՝

- հանդիպումների և աշխատարանների համար նախատեսված սենյակ,
- աշխատակազմի սենյակ,
- համակարգչային սենյակ՝ համացանցի հասանելիությամբ,
- խաղերի սենյակ՝ ուսուցողական և ժամանցային խաղերով,
- խոհանոց և սանհանգույց՝ անհրաժեշտ կոմունալ հարմարություններով,
- գրադարան՝ պատանեկան և մասնագիտական գրականությամբ,
- կավագործության առանձին արհեստանոց (առկա է Գյումրու կենտրոնում, որն ունի սոցիալական ձեռնարկության ձևավորման պոտենցիալ):

Բացի ներքին տարածքներից, կենտրոններն ունեն նաև արտաքին բակային հատվածներ, որոնք ներառում են զրուցարաններ և հեծանիվների կայանատեղիներ (Գյումրի)՝ հնարավորություն ընձեռելով իրականացնել բացօթյա միջոցառումներ և խթանել երիտասարդների ակտիվ հանգիստը:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին՝ սույն հրավերին կից ներկայացված տեխնիկական չափորոշիչներին համապատասխան:

Ծրագրի նպատակն է՝

ՀՀ Գյումրի, Վաղարշապատ, Արմավիր, Արթիկ, Գավառ և Աշտարակ համայնքներում «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների արդիականացման միջոցով ձևավորել ժամանակակից, հարմարավետ, գրավիչ և ներառական

երիտասարդական միջավայրեր՝ նպաստելով 13-35 տարեկան երիտասարդների հմտությունների զարգացմանը, քաղաքացիական մասնակցությանը, սոցիալական ներառմանը և համայնքային կյանքում ակտիվ ներգրավմանը:

Ծրագիրը միտված է երիտասարդական կենտրոնների զարգացման նոր որակական փուլ ապահովելուն՝ բարձրացնելով երիտասարդական աշխատանքի արդյունավետությունը, կենտրոնների գրավչությունը և մատուցվող ծառայությունների որակն ու ազդեցությունը:

Ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1. **Տարածքային միջավայրի և ֆունկցիոնալ հնարավորությունների արդիականացում**
   Արդիականացնել գործող «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների նյութատեխնիկական բազան, շենքագույքային պայմանները՝ դարձնելով ժամանակակից, հարմարավետ, ներառական, անվտանգ և գրավիչ երիտասարդական միջավայրեր, ինչպես նաև բարելավել կենտրոնների ֆունկցիոնալ հնարավորությունները՝ ստեղծելով բազմաֆունկցիոնալ և ճկուն տարածքներ, որոնք հնարավորություն կտան իրականացնել տարբեր ձևաչափի գործունեություններ՝ ուսումնական, ստեղծարար, խորհրդատվական, խմբային և անհատական աշխատանքների համար:

2. **Ծառայությունների բովանդակային որակի բարձրացում և շահառուների շրջանակի ընդլայնում**
   Բարձրացնել երիտասարդական կենտրոններում մատուցվող ծառայությունների որակը և բազմազանությունը՝ ընդլայնելով երիտասարդների համար հասանելի կրթական, զարգացման և ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպման հնարավորությունները, ինչպես նաև ապահովելով կենտրոնների ծառայությունների հասանելիությունը ոչ միայն 13-18, այլև մինչև 35 տարեկան երիտասարդների, այդ թվում՝ մարզային, խոշորացված համայնքների, տեղահանված և սոցիալապես խոցելի խմբերի համար:

3. **Մասնակցային ներգրավման ապահովում և նախաձեռնողականության խթանում**
   Ապահովել երիտասարդների լիարժեք, իմաստալից և մասնակցային ներգրավումը կենտրոնների գործունության մեջ՝ ձևավորելով այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով նրանք կկարողանան հանդես գալ ոչ միայն որպես ծրագրերի շահառուներ, այլև որպես գաղափարների նախաձեռնողներ, ծրագրերի համաստեղծողներ և կենտրոնների զարգացման ակտիվ դերակատարներ՝ նպաստելով նրանց կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան պայմանների ու ծառայությունների ձևավորմանը:

4. **Մասնագիտական կարողությունների ամրապնդում**
   Ստեղծել առավել նպաստավոր աշխատանքային պայմաններ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի կազմակերպման համար՝ խթանելով երիտասարդական աշխատողների մասնագիտական հմտությունների արդյունավետ կիրառումը, մոտիվացիան և շարունակական զարգացումը:

5. **Կենտրոնների համայնքային դերակատարության ուժեղացում**
Ամրապնդել երիտասարդական կենտրոնների դիրքը համայնքներում որպես ժամանակակից, վստահելի և գրավիչ երիտասարդական միջավայրեր՝ նպաստելով դրանց կայուն գործունեությանը և երկարաժամկետ ազդեցությանը:

Ակնկալվող արդյունքներն են՝

1. **Արդիականացված երիտասարդական միջավայրեր**
Գյումրի, Վաղարշապատ, Արմավիր, Արթիկ, Աշտարակ և Գավառ համայնքներում կգործեն ժամանակակից, անվտանգ, ներառական և բազմաֆունկցիոնալ թվով 6 «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններ՝ լիովին համապատասխան պետական չափորոշիչներին և ֆիզիկական մատչելիությամբ ապահովված նաև հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար:
2. **Բարելավված և բազմազան ծառայություններ՝ լայն հասանելիությամբ**
ՀՀ-ում գործող «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններում (Գյումրի, Վաղարշապատ, Արմավիր, Արթիկ, Աշտարակ և Գավառ) կգործի ծառայությունների ընդլայնված փաթեթ՝ ներառելով ոչ ֆորմալ կրթություն, կյանքի հմտությունների զարգացում, քաղաքացիական կրթություն, միջմշակութային կարողությունների ձևավորում, մասնագիտական կողմնորոշում, առողջ ապրելակերպի խթանում, շրջակա միջավայրի պահպանության մշակույթ և երիտասարդական նախաձեռնությունների իրականացում՝ հասանելի 13-35 տարեկան երիտասարդների համար, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված, մարզային և սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների:
3. **Երիտասարդների կարողությունների զարգացում և մասնակցության աճ**
Տարեկան շուրջ 3,000 երիտասարդ կօգտվի կենտրոնների ծառայություններից՝ զարգացնելով կյանքի, սոցիալական, քաղաքացիական և միջմշակութային հմտություններ, նախաձեռնողականություն և աշխատաշուկայում մրցունակ կարողություններ, ինչպես նաև ակտիվորեն կներգրավվեն համայնքային կյանքում:
4. **NEET (կրթություն կամ ուսուցում չստացող, զբաղվածություն չունեցող երիտասարդներ) խմբում հայտնվելու ռիսկերի նվազեցում**
Կենտրոնների ծառայությունների և աջակցության մեխանիզմների միջոցով կնվազի NEET երիտասարդների թիվը՝ հատկապես մարզային և խոշորացված համայնքներում:
5. **Երիտասարդական աշխատանքի որակի բարձրացում**
Կստեղծվեն առավել նպաստավոր պայմաններ երիտասարդական աշխատողների գործունեության համար՝ ապահովելով նրանց մասնագիտական

կարողությունների զարգացումը և երիտասարդական աշխատանքի որակի բարձր մակարդակ համայնքներում:

6. **Տեղական երիտասարդական քաղաքականության ամրապնդում և սոցիալական գործընկերության զարգացում**
Կուժեղանա համայնքային մակարդակում երիտասարդական քաղաքականության գործնական իրականացումը՝ «Երիտասարդների տուն» կենտրոնները դիրքավորվելով որպես համայնքապետարանների հիմնական գործընկեր հարթակներ երիտասարդների հետ աշխատանքի համար: Կամրապնդվի համայնքապետարանների և քաղաքացիական հասարակության միջև սոցիալական գործընկերությունը՝ ձևավորելով համագործակցության կայուն մեխանիզմներ երիտասարդական ծրագրերի պլանավորման, իրականացման և գնահատման ուղղությամբ: Կենտրոնները կդառնան համայնքային երիտասարդական ռազմավարությունների իրականացման գործիքներ՝ ապահովելով երիտասարդների մասնակցությունը տեղական որոշումների կայացման գործընթացներին և նպաստելով երիտասարդակենտրոն քաղաքականությունների ձևավորմանը համայնքային մակարդակում:

7. **Կենտրոնների համայնքային դերի ամրապնդում**
«Երիտասարդների տուն» կենտրոնները կհաստատվեն որպես համայնքներում գործող ժամանակակից, վստահելի և բաց հարթակներ՝ ծառայելով երիտասարդների, ոչ ֆորմալ խմբերի և գործընկեր կառույցների համար որպես համագործակցության և նախաձեռնությունների իրականացման միջավայր:

Առաջիկա 5 տարիներին կենտրոնի գործունեությունը ապահովելու հիմնավորումը:

Ներկայացրեք ՍԶ մոդելը, որը պետք է ապահովի երիտասարդական կենտրոնի առնվազն առաջիկա 5 տարիների գործունեությունը և համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի կամ համաձայնագրի կա հուշագրի հիման վրա համայնքի կողմից ստանձնած պարտավորության շրջանակը:

«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնները հանդիսանում են Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից հիմնադրված համայնքային ենթակառուցվածքներ և չեն գործում որպես առանձին սոցիալական ձեռնարկատիրական միավորներ: Կենտրոնների կայունությունն ու շարունակականությունը ապահովվում է ԵՆԿ ՀԿ-ի ինստիտուցիոնալ կառավարման մոդելի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ձևավորված երկարաժամկետ գործընկերության համադրությամբ:

Ծրագրում ընդգրկված բոլոր համայնքներում (Գյումրի, Վաղարշապատ, Արմավիր, Արթիկ, Աշտարակ, Գավառ) կենտրոնների գործունեությունը կարգավորվում է համայնքապետարանների հետ կնքված հուշագրերով, պայմանագրերով, համաձայնագրերով կամ համայնքի ավագանու որոշումներով, որոնց շրջանակում համայնքները ստանձնում են հետևյալ պարտավորությունները՝

- համայնքային սեփականություն հանդիսացող համապատասխան տարածքների անհատույց տրամադրում և դրանց երկարաժամկետ օգտագործման իրավունքի ապահովում,

- կենտրոնների ամբողջական գործարկման և պահպանման հիմնական ծախսերի հոգում՝ ներառյալ կոմունալ և հաղորդակցման ծառայությունները, տեխնիկական սպասարկումը և նյութատեխնիկական ապահովումը,

- կենտրոնների հիմնական աշխատակազմի աշխատավարձերի և մարդկային ռեսուրսների հետ կապված ծախսերի ապահովում կամ համաֆինանսավորում:

Նշված պարտավորությունները ունեն երկարաժամկետ բնույթ (5-ից մինչև 10 տարի ժամկետով) և ապահովում են կենտրոնների ֆինանսական ու ինստիտուցիոնալ կայունությունը՝ անկախ ծրագրային ֆինանսավորումներից: Համայնքապետարանների հետ կնքված բոլոր պայմանագրերը, հուշագրերը, համաձայնագրերը և համապատասխան տեղեկանքները ներկայացվում են սույն հայտադիմումին կից՝ որպես կենտրոնների առնվազն առաջիկա հինգ տարիների կայուն և շարունակական գործունեության իրավական երաշխիք:

ԵՆԿ ՀԿ-ն իր հերթին ապահովում է կենտրոնների բովանդակային կառավարումը՝ ծրագրերի մշակումն ու իրականացումը, աշխատակազմի ապահովումը և երիտասարդական ծառայությունների որակի շարունակական զարգացումը՝ ծառայությունները դարձնելով հասանելի 13-35 տարեկան երիտասարդների համար՝ ՀՀ «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքին համապատասխան:

Լրացուցիչ կայունացման գործիքների շրջանակում որոշ կենտրոններում նախատեսվում է սոցիալական ձեռնարկության տարրերի ներդրում, մասնավորապես՝ Գյումրիի և Գավառի կենտրոններում առկա հեծանիվների (յուրաքանչյուրում շուրջ 20 միավոր) օգտագործումը վարձակալության և տուրերի կազմակերպման նպատակով, Գյումրու կենտրոնում գործող կավագործության արհեստանոցի հիման վրա արտադրանքի ստեղծում և իրացում, ինչպես նաև կենտրոնների առանձին տարածքների տրամադրում վճարովի աշխատարանների, վերապատրաստումների և միջոցառումների կազմակերպման համար: Սոցիալական ձեռնարկության տարրերից ձևավորվող եկամուտները կուղղվեն կենտրոնների ընթացիկ կարիքների մասնակի ապահովմանը և երիտասարդների գործնական հմտությունների զարգացմանն ու զբաղվածության խթանմանը:

Այս համակցված մոդելը՝ համայնքապետարանների երկարաժամկետ պարտավորությունները, ԵՆԿ ՀԿ-ի ինստիտուցիոնալ կառավարումը և սոցիալական ձեռնարկության տարրերի կիրառումը, միասին ապահովում են «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների անխափան, կայուն և իրատեսական գործառումը առնվազն առաջիկա հինգ տարիների ընթացքում:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև կազմակերպության կառավարման առնվազն 3 տարվա գործունեությունը

(Ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ԵՆԿ ՀԿ) հիմնադրվել է 2008 թվականի դեկտեմբերին՝ երիտասարդական աշխատանքի ոլորտում փորձ ունեցող և այդ ոլորտում ճանաչված մի խումբ երիտասարդների կողմից: Ավելի քան 15 տարվա գործունեության ընթացքում կազմակերպությունը ձևավորվել է որպես ոլորտային առաջատար կառույց՝ իրականացնելով ծրագրեր ՀՀ ողջ տարածքում և նպաստելով Հայաստանում երիտասարդական աշխատանքի համակարգային զարգացմանը:

ԵՆԿ ՀԿ-ի առաքելությունն է նպաստել երիտասարդի կայացմանը՝ որպես մրցունակ, նախաձեռնող և պատասխանատու անհատ ու քաղաքացի՝ առաջնորդվելով «Երիտասարդների համար, երիտասարդների հետ, երիտասարդների կողմից» սկզբունքով: Կազմակերպության գործունեության առանցքում է պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի զարգացումը, երիտասարդների կարիքներին արձագանքող ծառայությունների մատուցումը և ներառական ու անվտանգ երիտասարդական միջավայրերի ձևավորումը համայնքներում:

Իր գործունեության սկզբնական շրջանից ԵՆԿ ՀԿ-ն դարձել է ոլորտային առաջատար կազմակերպություններից մեկը և գործում է ՀՀ ողջ տարածքում: Հայաստանում երիտասարդական աշխատանքի զարգացումը շարունակաբար գտնվում է կազմակերպության ռազմավարական առաջնահերթությունների շարքում՝ որպես երիտասարդական քաղաքականության իրականացման գործնական հարթակ համայնքներում:

ԵՆԿ ՀԿ-ն ունի բազմամյա և համակարգված փորձ՝

- երիտասարդական կենտրոնների ստեղծման, կառավարման և համակարգման,
- համայնքների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ գործընկերային համագործակցության,
- տեղական և միջազգային բազմակողմ ֆինանսավորվող ծրագրերի արդյունավետ իրականացման,
- երիտասարդության ոլորտում հետազոտությունների, վերլուծությունների և զեկույցների մշակման,
- մեթոդաբանական փաստաթղթերի, ուղեցույցների և ուսումնական մոդուլների մշակման,
- երիտասարդական աշխատանքի և երիտասարդական քաղաքականության զարգացմանն ուղղված փորձագիտական աջակցության ոլորտներում:

Կազմակերպության ձևավորված կառավարման համակարգը, փորձառու աշխատակազմը և ծրագրերի մոնիթորինգի ու հաշվետվողականության մեխանիզմները հնարավորություն են տալիս իրականացնել տարբեր ծավալի և բարդության ծրագրեր՝ ապահովելով ինչպես ֆինանսական, այնպես էլ բովանդակային թափանցիկություն և արդյունավետություն:

ԵՆԿ ՀԿ-ն ունի նաև խորքային փորձ երիտասարդական աշխատանքի ոլորտում հետազոտությունների, վերլուծությունների և ուսումնական մոդուլների մշակման ուղղությամբ: Կազմակերպության առնվազն երեք փորձագետներ անմիջականորեն ներգրավված են եղել ՀՀ «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի մշակման գործընթացում: Միաժամանակ, ԵՆԿ ՀԿ-ն իրականացրել է «Երիտասարդական միջավայրի գործունեության ուղեցույցի» մշակումը:

Կազմակերպությունը հանդես է գալիս ոչ միայն որպես ծրագրեր իրականացնող կառույց, այլև որպես ոլորտային քաղաքականության, մեթոդաբանության և ենթակառուցվածքների ձևավորման դերակատար: ԵՆԿ ՀԿ-ն ունի փորձ նաև տեղական երիտասարդական քաղաքականությունների մշակման ոլորտում՝ աջակցելով համայնքապետարաններին երիտասարդական ռազմավարությունների, գործողությունների ծրագրերի և համայնքային երիտասարդական մոդելների ձևավորման գործընթացում՝ նպաստելով պետական քաղաքականության տեղայնացմանն ու գործնական կիրառմանը համայնքներում:

Բացի այդ, ԵՆԿ ՀԿ-ն համակարգում է Հայաստանում «Էրազմուս+ Երիտասարդություն և «Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնը՝ ապահովելով երիտասարդների և մասնագետների համար միջազգային կրթական և մասնակցային հնարավորությունների հասանելիությունը ազգային մակարդակով:

Կազմակերպության ռազմավարական ուղղություններից է երիտասարդական միջավայրերի աշխարհագրական ընդլայնումը մարզերում և այն բնակավայրերում, որտեղ նման ենթակառուցվածքներ երբևէ չեն գործել: Այդ շրջանակում ԵՆԿ ՀԿ-ն նախատեսում է՝

- 2026 թվականին առաջին կիսամյակում «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն հիմնադրել Աշտարակ համայնքում,

- ստեղծել և գործարկել երեք նոր երիտասարդական տարածք՝
  - Լոռու մարզ, Ալավերդի համայնք, Օձուն բնակավայր,
  - Շիրակի մարզ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր,
  - Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Գեղակերտ բնակավայր:

Այս նախաձեռնությունները միտված են նվազեցնելու երիտասարդական միջավայրերի հասանելիության տարածքային անհավասարությունները և ապահովելու երիտասարդական աշխատանքի գործնական ներկայությունը նաև փոքր համայնքներում և հեռավոր բնակավայրերում:

ԵՆԿ ՀԿ-ի գործունեությունը վերջին տարիներին առանձնանում է բազմազան, ռազմավարական և ազդեցիկ ծրագրերի իրականացմամբ, որոնք ուղղված են ինչպես երիտասարդների կարողությունների զարգացմանը, այնպես էլ երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ կայացմանը Հայաստանում: Ստորև ներկայացվում են կազմակերպության կողմից իրականացված հիմնական ծրագրերն ու նախաձեռնությունները, որոնք վկայում են ԵՆԿ ՀԿ-ի փորձառության, կարողությունների և ոլորտում համակարգային փոփոխություններ նախաձեռնելու ու իրականացնելու ներուժի մասին:

1. **«Երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն»**

Իրականացման ժամկետ. 2015
Նպատակ. Հայաստանում խթանել երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալ զարգացումը՝ ոլորտում առկա գիտելիքների և կուտակված հմտությունների հիման վրա, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը:
Արդյունք. ՀՀ-ում առաջին ոլորտային զեկույցը, որը հիմք է դարձել երիտասարդական աշխատանքի վերաբերյալ քաղաքական և մասնագիտական քննարկումների զարգացման համար

2. Երիտասարդական աշխատողների առաջին վերապատրաստման ծրագիր Հայաստանում

Իրականացման ժամկետ. 2016 (ամառ)
Ֆինանսավորում. ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
Նպատակ. Երիտասարդական աշխատողի ինստիտուտի ձևավորման, գործառույթների և կարողությունների շուրջ մասնագիտական դաշտի ձևավորում:
Արդյունք. Հայաստանում առաջին անգամ իրականացված համակարգված վերապատրաստում երիտասարդական աշխատողների համար
Բյուջե. 3.030.000 ՀՀ դրամ

3. Երիտասարդական աշխատողների ամենամյա պետական վերապատրաստման ծրագրերի աջակցություն

Իրականացման ժամկետ. 2016 թ. աշնանից շարունակաբար
Ֆինանսավորում. ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
Նպատակ. Աջակցել երիտասարդական աշխատողների ամենամյա պետական վերապատրաստման ծրագրի լավարկմանն ու որակյալ իրականացմանը
Արդյունք. ԵՆԿ ՀԿ-ի փորձագիտական ներուժի ինտեգրում պետական վերապատրաստման համակարգում:
Բյուջե. 3.030.000 ՀՀ դրամ

4. Բաց երիտասարդական աշխատանքի առաջին դասընթացը Հայաստանում

Իրականացման ժամկետ. 2019 (սեպտեմբեր)
Ֆինանսավորում. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Նպատակ. Երիտասարդական աշխատանքում ներգրավված դերակատարների կարողությունների զարգացում բաց երիտասարդական աշխատանքի մոդելի շուրջ:
Արդյունք. Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչման և կայացման առաջին համակարգված քայլ:
Բյուջե. 3.030.000 ՀՀ դրամ

5. «Երիտասարդների քաղաք. զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործընթացում երիտասարդների դերի բարձրացում»

Իրականացման ժամկետ. դեկտեմբեր 2019 թ. – փետրվար 2022 թ.
Ֆինանսավորում. Եվրոպական հանձնաժողովի Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալություն (European Education and Culture Executive Agency (EACEA))
Նպատակ. բարձրացնել երիտասարդների դերը և ներգրավվածությունը իրենց համայնքների հզորացման գործում՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործընթացներում նրանց ակտիվորեն ներգրավելու միջոցով:
Արդյունք. Ծրագիրը գրանցել է շոշափելի արդյունքներ՝ երիտասարդներին և երիտասարդական աշխատողներին հզորացնելով ակտիվորեն ներգրավվելու

տնտեսական և համայնքային զարգացման գործընթացներում՝ զբոսաշրջության միջոցով: Ծրագիրն իրականացվել է հինգ երկրներում (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Խորվաթիա և Չեխիա) և նպաստել երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացմանը միջազգային վերապատրաստումների և ուսումնական այցերի միջոցով, երիտասարդներին տրամադրված համապարփակ քոուչինգի, մենթորության, բիզնես խորհրդատվությունների և միջազգային երիտասարդական փոխանակումների միջոցով՝ ուղղված հյուրընկալության, զբոսավարության և համայնքային զբոսաշրջության զարգացմանը: Արդյունքում՝ ավելի քան հարյուր երիտասարդ բարձրացրել է իր ձեռնարկատիրական հմտությունները, ինքնավստահությունը և քաղաքացիական ակտիվությունը, ինչը հանգեցրել է տեղական մակարդակում զբոսաշրջությանն առնչվող կոնկրետ բիզնես գաղափարների մշակմանը:
Բյուջե. 116.965,09 եվրո

6. Վաղարշապատ, Արմավիր և Գավառ համայնքներում «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների հիմնադրում և գործարկում
Իրականացման ժամկետ. 2022 թ.
Ֆինանսավորում. ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան,
Գործընկերներ. Վաղարշապատի, Արմավիրի և Գավառի համայնքապետարաններ
Նպատակ. Բարձրացնել Հայաստանում, մասնավորապես՝ Վաղարշապատ, Արմավիր և Գավառ համայնքներում 13-18 տարեկան պատանիների և երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:
Արդյունք. Վաղարշապատ, Արմավիր և Գավառ համայնքներում բաց երիտասարդական աշխատանքի մոդելի ներդրում և երիտասարդական միջավայրի ձևավորում:
Բյուջե. 64.538.778 ՀՀ դրամ

7. «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիր
Իրականացման ժամկետ. 2023 թ. մարտ - 2026 թ. հունիս
Ֆինանսավորում. Եվրոպական միություն, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ
Գործընկերներ. Վորլդ Վիժն Հայաստան, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն
Նպատակ. Երիտասարդների ներգրավվածության, մասնագիտական կողմնորոշման, ոչ ֆորմալ ուսուցման և երիտասարդական ոլորտի վերաբերյալ կարողությունների զարգացում համայնքային կազմակերպիչների և երիտասարդական աշխատողների շրջանում:
Արդյունք. Հայաստանում կայուն երիտասարդական քաղաքացիական կրթության և առաջնորդության ձևավորում, ՔՀԿ-ների և ՏԻՄ ներկայացուցիչների կարողությունների զարգացում, հանրային գործընթացներին երիտասարդների ակտիվ և ազդեցիկ մասնակցություն:
Բյուջե. 385.193 եվրո

8. «Երիտասարդական աշխատողների և տեղական կազմակերպությունների հիմնարար հմտությունների զարգացում»
Իրականացման ժամկետ. 2023 թ. դեկտեմբերից
Ֆինանսավորում. ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան, ԱՄՆ ՄԶԳ

Նպատակ. Զարգացնել երիտասարդական և համայնքային աշխատողների, ինչպես նաև երիտասարդների հետ աշխատող այլ մասնագետների՝ դեռահասներին և երիտասարդներին արդյունավետ կերպով համայնքային կյանքին ներգրավելու հմտությունները, հոգեկան առողջության, հուզական կարգավորման, սթրեսի կառավարման, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների հմտությունները, երիտասարդական աշխատանքի համատեքստում՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդներին արդյունավետ ներգրավելու և աջակցելու հմտությունները (հաշմանդամության մոդելներ, իրավունքների վրա հիմնված մոտեցման սկզբունքներ և հաղորդակցության ձևեր):
Արդյունք. ՀՀ տասը (10) մարզերից և Երևանից ընդհանուր թվով 242 երիտասարդական աշխատողներ, երիտասարդների հետ աշխատող մասնագետներ և երիտասարդների հիմնահարցերով զբաղվող հասարակական և պետական հաստատությունների դերակատարների կարողությունների համակարգված զարգացում երիտասարդության ոլորտում:
Բյուջե. 37.551.115 ՀՀ դրամ

9. «Երիտասարդ քաղաքացիները գործում են. Երիտասարդները որպես տեղական ժողովրդավարության ջատագովներ և ակտիվիստներ»

Իրականացման ժամկետ. 2024 թ. մայիսից - նոյեմբեր
Ֆինանսավորում. Եվրոպական երիտասարդական հիմնադրամ (EYF)
Նպատակ. Երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացում տեղական մակարդակում որոշումների կայացման, երիտասարդների մասնակցության և քաղաքացիական ակտիվության ոլորտներում:
Արդյունք. Երիտասարդների մասնակցության ամրապնդում համայնքային մակարդակում:
Բյուջե. 14.999 եվրո

10. ՏԻՄ և ՔՀԿ ներկայացուցիչների կարողությունների զարգացման ծրագիր

Իրականացման ժամկետ. 2024 թ. Հոկտեմբեր- 2025թ. Հուլիս
Ֆինանսավորում. ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան
Նպատակ. Երիտասարդական միջավայրի ձևավորման, երիտասարդական քաղաքականության իրականացման և համայնքային երիտասարդական ծառայությունների զարգացման աջակցություն ՀՀ մարզերում:
Արդյունք. Համայնքային մակարդակում երիտասարդական քաղաքականության կարողությունների ամրապնդում:
Բյուջե. 22.654.800 ՀՀ դրամ

11. «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» (ԿԳՄՍՆ, 2024)

Իրականացման ժամկետ. 2024 թ. օգոստոսի 2 – դեկտեմբերի 10
Ֆինանսավորում. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՅՈՒՆԻՍԵՖ համաֆինանսավորում
Նպատակ. Կատարելագործել երիտասարդների հետ պրակտիկ աշխատանք կատարող անձանց մասնագիտական և անձնային որակները՝ ազգային և ՏԻՄ մակարդակում որակյալ և գիտելիքահեն երիտասարդական աշխատանք իրականացնելու համար
Արդյունք. Երիտասարդական աշխատանքի ազգային կարողությունների լայնածավալ զարգացում:
Բյուջե. 7.961.400 ՀՀ դրամ

12. «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» (ԿԳՄՍՆ, 2025)
Իրականացման ժամկետ. 2025 թ. հուլիսի 1 – նոյեմբերի 30
Ֆինանսավորում. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՅՈՒՆԻՍԵՖ, ԵՄ աջակցություն
Նպատակ.Կատարելագործել երիտասարդների հետ պրակտիկ աշխատանք կատարող անձանց մասնագիտական և անձնային որակները՝ ազգային և ՏԻՄ մակարդակում որակյալ և գիտելիքահեն երիտասարդական աշխատանք իրականացնելու համար
Արդյունք. Երիտասարդական աշխատանքի ազգային կարողությունների լայնածավալ զարգացում:
Բյուջե. 7.890.440 ՀՀ դրամ

Ծրագրերի շրջանակում ապահովվել են չափելի և կայուն արդյունքներ՝ երիտասարդների ներգրավվածության աճ, երիտասարդական ծառայությունների որակի բարձրացում և համայնքներում երիտասարդական կյանքի ակտիվացում: Կազմակերպությունն ունի ձևավորված կառավարման համակարգ, փորձառու աշխատակազմ և ծրագրերի արդյունավետ մոնիթորինգի ու հաշվետվողականության մեխանիզմներ, ինչը թույլ է տալիս հաջողությամբ իրականացնել տարբեր ծավալի և բարդության ծրագրեր՝ ապահովելով ֆինանսական և բովանդակային թափանցիկություն:

ԵՆԿ ՀԿ-ի բազմամյա փորձառությունը, երիտասարդական կենտրոնների կառավարման գործում կուտակված գիտելիքն ու գործնական կարողությունները հանդիսանում են սույն ծրագրի արդյունավետ իրականացման և կայուն արդյունքների ապահովման հիմնարար երաշխիք:

Առաջին տարվա ընթացքում իրականացվելիք գործողությունները

Որոնք են այն կոնկրետ միջոցառումները, որոնք նախատեսվում է իրականացնել համապատասխան սույն հրավերին կից ներկայացված տեխնիկական չափորոշիչներին: Նկարագրեք կենտրոնի տարածքը, տարածքի վերանորոգման համար նախատեսվող աշխատանքները, սենյակների դասավորությունը՝ ներառյալ սենյակների քանակի կամ բաց տարածքի /open space/, սենյակ/սենյակների գործառնական նշանակության վերաբերյալ, շենք/շինության ներքին և արտաքին բարեկարգվածության վերաբերյալ տեղեկատվությունը:

«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ կողմից նախատեսվող գործողությունները հետևյալն են՝

1. Բաց երիտասարդական աշխատանքի մոդելի վերանայում՝ հաշվի առնելով կենտրոնների ֆիզիկական միջավայրի և ծառայությունների արդիականացման անհրաժեշտությունը:
2. «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների շահառուների տարիքային խմբի ընդլայնում՝ երիտասարդների կարիքներին և համայնքային առանձնահատկություններին համապատասխան:
3. Կենտրոնների տարածքների ֆունկցիոնալ վերադասավորում՝ ապահովելով բազմաֆունկցիոնալ սենյակներ և/կամ բաց տարածք (open space), որոնք

կարող են ծառայել ոչ ֆորմալ կրթության, խմբային աշխատանքի, հանդիպումների և ժամանցային գործունեությունների իրականացման համար:

4. Տարածքների հագեցում ժամանակակից կահույքով և անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով՝ կենտրոնների գործառնական արդյունավետությունը և երիտասարդների ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով:
5. Կենտրոնների վերանորոգման/հիմնանորոգման աշխատանքների իրականացում, մասնավորապես՝

Երիտասարդական կենտրոն	Վերանորոգման/հիմնանորոգման աշխատանք
Գյումրու երիտասարդների տուն	1. Կենտրոնի ներքին տարածքի ֆունկցիոնալ վերադասավորում՝ միջանցքի և աշխատարանի սենյակի միավորումով ավելի բաց և ճկուն տարածքի ձևավորում, 2. Բազմաֆունկցիոնալ ձևաչափի ստեղծում՝ խմբային աշխատանքի, աշխատարանների և միջոցառումների համար, 3. Նոր ապակե միջնորմների և դռների տեղադրում՝ թափանցիկ, ժամանակակից միջավայր ապահովելու նպատակով, 4. Հատակի ամբողջական նորացում (հաղճասալիկ, լամինատ) և պատերի/առաստաղների վերանորոգում, 5. Ջեռուցման համակարգի արդիականացում և էներգաարդյունավետ լուսավորության տեղադրում, 6. Էլեկտրական համակարգի մասնակի վերազինում, 7. Սանհանգույցի և խոհանոցային հատվածի հիմնանորոգում, 8. Շենքի արտաքին ֆասադի բարեկարգում և մուտքի հատվածի ամբողջական վերափոխում, 9. Բակի բարեկարգում՝ նստարաններ, արևային լուսավորություն, սպորտային տարրերի ավելացում (բասկետբոլի գոտի), 10. Բացօթյա տարածքների ակտիվ օգտագործման հնարավորությունների ընդլայնում:
Արթիկի երիտասարդների տուն	1. Ներքին տարածքի կոսմետիկ և մասնակի հիմնանորոգում, 2. Տարածքի վերաձևավորում՝ պատերի քանդում և սենյակների միավորում, 3. Սանհանգույցի տեղադրում և հարմարեցում, 4. Ջեռուցման համակարգի տեղադրում, 5. Պատերի, դռների, պատուհանների, առաստաղների և հատակի նորացում, 6. Կենտրոնի մուտքի և արտաքին հատվածի բարելավում:
Էջմիածնի երիտասարդների տուն	1. Տարածքի վերաձևավորում՝ միջանցքի և դասընթացների սենյակի միավորում, 2. Շարժական/այլումինե միջնորմի տեղադրում՝ ճկուն տարածքային կառավարման համար, 3. Բազմաֆունկցիոնալ դասընթացային սենյակի ձևավորում 4. Հատակի ամբողջական փոխարինում և արդիական ծածկույթների տեղադրում,

	5. Ներքին հարդարման ամբողջական թարմացում (պատեր, առաստաղներ), 6. Լուսավորության և էլեկտրական համակարգի արդիականացում, 7. Կենտրոնի մուտքի դռան փոխարինում և ֆասադի թարմացում, 8. Կենտրոն տանող ուղու բարեկարգում և արտաքին տեսքի բարելավում:
Արմավիրի երիտասարդների տուն	1. Ընդունարանի, աշխատակազմի, համակարգչային և դասընթացների սենյակների ամբողջական ներքին թարմացում, 2. Տարածքների ֆունկցիոնալ վերադասավորում՝ ապակե միջնորմներով, 3. Հատակի ծածկույթի ամբողջական փոխարինում, 4. Նոր ապակե դռների տեղադրում՝ թափանցիկ և ժամանակակից միջավայր ապահովելու նպատակով, 5. Էլեկտրական և լուսավորության համակարգի արդիականացում, 6. Խոհանոցի հատվածի վերանորոգում, 7. Մուտքի ֆասադի ամբողջական թարմացում, 8. Նոր մետաղապլաստե դռների և պատուհանների տեղադրում, 9. Արտաքին լուսավորության բարելավում:
